Հայաստանի Հանրապետության

Ազգային ժողովի նախագահին

Ադրբեջանի կողմից 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի առաջին օրից «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից նախաձեռնվել է «Մենք ենք, մեր սահմանները» խորագրով համազգային դրամահավաք-արշավ, որի արդյունքում հավաքագրված միջոցներից 52,703,113.3952 հազ. ՀՀ դրամ գումար փոխանցվել է պետական բյուջե[1]:

2020 թ. նոյեմբերի 24-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տարածված տեղեկատվության համաձայն. «Հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության միջև կնքված նվիրաբերության պայմանագրերի հիման վրա Հիմնադրամը «Ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվություններից պետության, ռազմական դրություն հայտարարելու հանգամանքներով պայմանավորված ենթակառուցվածքների, սոցիալական և առողջապահական ծախսերի ֆինանսավորման համար ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին աղբյուրներից» թիվ 900005002135 գանձապետական հաշվեհամարին, որպես նվիրաբերություն, փոխանցել է 52,703,113.3952 հազ. ՀՀ դրամ գումար (այսուհետ՝ նվիրաբերության գումար) **պետության, ռազմական դրություն հայտարարելու հանգամանքներով պայմանավորված ենթակառուցվածքների, սոցիալական և առողջապահական ծախսերի ֆինանսավորման նպատակով օգտագործելու պայմանով**:»[2]

2021 թ. մարտի 15-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 29-րդ՝ հեռավար կարգով անցկացված նիստում որոշվել է. «Հանձնարարել աշխատանքային խմբին՝ աշխատել «Բեյքր Թիլլի Արմենիա» աուդիտորական ընկերության և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ պատերազմի ընթացքում հավաքագրված միջոցների

---

[1] https://www.himnadram.org/hy/1606218447:

[2] https://minfin.am/hy/content/_hayastan_hamahaykakan_himnadrami_finansakan_mijocneri_tsakhseri_masin_teghekatvutyun_/#sthash.RhgEM7pC.dpbs

օգտագործման նպատակների հստակեցման հարցով և մինչև ս.թ. ապրիլի 5-ը հոգաբարձուների խորհրդին ներկայացնել եզրակացություն» (որոշում N 1, կետ 3):

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի վերը նշված որոշմանը կից ընդունված Հավելված 1-ի համաձայն՝ եզրակացությունը պետք է նպաստեր, որպեսզի փարատվեն հավաքագրված գումարների օգտագործման հետ կապվող բոլոր կասկածները և ապահովվի հանրության վստահությունը:

Համաձայն «Հայաստան» համահայկական հիմնադրամի կանոնադրության 25-րդ կետի, ինչը գրեթե նույնությամբ կրկնում է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը, հիմնադրամի գույքի՝ ներառյալ ֆինանսական միջոցները, գոյացման աղբյուրներն են, ի թիվս այլնի, ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Հայկակ Արշամյանը իր հարցազրույցներից մեկում նշել է. «*Նշեմ, որ մենք մոտավորապես գիտենք, որ Միացյալ Նահանգներում առնվազն 250 հազար մարդ է մասնակցել դրամահավաքին, նույնքան էլ Հայաստանում: SMS հաղորդագրություններն էլ եթե հաշվենք, Հայաստանում պրակտիկորեն չափահաս բնակչությունը ներգրավված է եղել այս դրամահավաքին: Ասեմ կարևոր մի փաստ՝ հավաքագրված 170 միլիոնից շատ լուրջ հատվածը՝ 60-70 միլիոն դոլարը, հավաքագրվել է Հայաստանում:*»[3]

«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *հիմնադրամ է համարվում քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպությունը, որը* ***հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական և (կամ) այլ հանրօգուտ նպատակներ:***

[3] https://hetq.am/hy/article/124490:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կանոնադրության 10-րդ կետը սահմանում է հիմնադրամի գործունեության նպատակներն ու խնդիրները, որոնք ևս ունեն ***սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական և (կամ) այլ հանրօգուտ ուղղվածություն:***

«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցները հավաքագրվել են գրեթե ամբողջ հայության ջանքերով և մինչ օրս ո՛չ «Հայաստան» համահայկական հիմնադրամի, և ո՛չ էլ որևէ պետական մարմնի կողմից չեն ներկայացվել նշված միջոցների ծախսման վերաբերյալ հաշվետվություն (եզրակացություն) կամ այլ սպառիչ բացատրություն, ինչը հնարավորություն կտար պարզելու այդ միջոցների ծախսման հստակ ուղղությունները (միջոցառումները):

Վերոշարադրյալ խնդիրն ունի հանրային մեծ նշանակություն և հետաքրքրություն: Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասով, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համապատասխան դրույթներով՝ ներքոստորագրյալ պատգամավորներս ներկայացնում ենք դիմում՝ Ադրբեջանի կողմից 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված 44 օրյա պատերազմի ընթացքում և դրան հաջորդող ժամանակահատվածում «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հավաքագրված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված միջոցների ծախսման կոնկրետ ուղղությունները (միջոցառումները) և «Հայաստան» համահայկական հիմնադրամի կանոնադրական նպատակներին ու նվիրաբերության պայմանագրով սահմանված նպատակներին միջոցների ծախսման ուղղությունների համապատասխանությունը ուսումնասիրող Ազգային ժողովի քննիչ հանձնաժողով (այսուհետ նաև՝ **«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հավաքագրված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված միջոցների օգտագործումը ուսումնասիրող Ազգային ժողովի քննիչ հանձնաժողով կամ քննիչ հանձնաժողով**) ստեղծելու մասին:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է: Հիմնադրամին նվիրաբերած միջոցները ուղղվել են ՀՀ պետական

բյուջե, իսկ գործադիր իշխանության և բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը Ազգային ժողովի սահմանադրական գործառույթն է: ՈՒստի վերը նշված քննիչ հանձնաժողովի ստեղծումը մտնում է Ազգային ժողովի իրավասության մեջ՝ Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝

1. քննիչ հանձնաժողովի քննության առարկան է «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված միջոցների օգտագործումը:

2. քննիչ հանձնաժողովի իրավասության ոլորտն է.

- Ադրբեջանի կողմից 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված 44 օրյա պատերազմի ընթացքում և դրան հաջորդող ժամանակահատվածում «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հավաքագրված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված միջոցներով ֆինանսավորված կոնկրետ ծախսերի և միջոցառումների ուսումնասիրությունը,
- Ադրբեջանի կողմից 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված 44 օրյա պատերազմի ընթացքում և դրան հաջորդող ժամանակահատվածում «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հավաքագրված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված միջոցների ծախսման փաստացի ուղղությունների և «Հայաստան» համահայկական հիմնադրամի կանոնադրական նպատակներին և նվիրաբերության պայմանագրին համապատասխանությունը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն քննիչ հանձնաժողովի նախագահն է Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արծվիկ Մինասյանը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն, քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը՝ 6 (վեց) ամիս է:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, կից ներկայացնում ենք քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու

մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը (այն կներկայացնի «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Հայկ Մամիջանյանը):

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ՝

h/h	անուն և ազգանուն		ստորագրություն
1.	Արշակ Օհանջանյան	078	
2.	Արթուր Հովհաննիսյան	080	
3.	Աշխեն Խաչատրյան	084	
4.	Արթուր Խաչատրյան	079	
5.	Հայրապետ Խաչատրյան	094	
6.	Հրաչիա Էլբակյան	091	
7.	Գեղամիր Հարությունյան	100	
8.	Կարեն Ռուստամյան	077	
9.	Հայկ Մամիջանյան	105	
10.	Լևոն Զալյան	103	
11.	Արմեն Ավագյան	083	
12.	Դավիթ Բաբայան	106	
13.	Արմեն Գրիգորյան	107	
14.	Հասմիկ Հարությունյան	102	

15.	[illegible]	073	[illegible]
16.	[illegible]	077	[illegible]
17.	[illegible]	093	[illegible]
18.	[illegible]	082	[illegible]
19.	[illegible]	099	[illegible]
20.	[illegible]	098	[illegible]
21.	[illegible]	095	[illegible]
22.	[illegible]	076	[illegible]
23.	[illegible]	081	[illegible]
24.	[illegible]	085	[illegible]
25.	[illegible]	088	[illegible]
26.	[illegible]	074	[illegible]
27.	[illegible]	101	[illegible]
28.	[illegible]	082	[illegible]
29.			